

Օրինակելի շինությունների կատալոգ՝ քաղաքային համայնքներին



Հունիսին Գյումրիում շահագործման կհանձնվի
ավելի քան 1000 բնակարան

Տեղական ինքնակառավարման համակարգում կան բազմաթիվ քաղաքային համայնքներ, որոնց աշխատակազմերում բացակայում է ճարտարապետի հաստիքը, ինչը խնդիրներ է առաջացնում նոր շինությունների նախագծման եւ կառուցման աշխատանքներում: Այդ իսկ պատճառով մշակվել է «Հայաստանի Հանրապետության համայնքներում անհատական բնակելի տների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կատալոգը», որում ցանկացողները կարող են գտնել 1—ից 6—սենյականոց բնակելի տների 17 տարբեր օրինակելի նախագծեր, որոնցից տասն ընտրվել է մրցույթի միջոցով. լրացուցիչ մշակվել է եւս 7 նախագիծ: Օրինակելի նախագծերի առաջին կատալոգը մշակվել էր դեռեւս 2002թ. եւ այն նախատեսված էր գյուղական համայնքների բնակչության, ինչպես նաեւ սոցիալապես անապահով խավերի համար: Ցավոք, կատալոգը լայն կիրառություն չգտավ՝ կառուցապատողի համար գնային տեսանկյունից ոչ մատչելի լինելու պատճառով: «Նոր նախագծերի փաթեթը մոտ 25 տոկոսով ավելի էժան է մյուսներից: Նման մոտեցմամբ կառուցապատողին հնարավորություն է ընձեռվել ընտրելու իր ճաշակին եւ ֆինանսական հնարավորություններին համապատասխան հուսալի եւ կենցաղային բարվոք պայմաններ ապահովող բնակելի տների նախագծեր, միաժամանակ ստեղծելով նախապայմաններ՝ բնակավայրերում կառուցապատման միասնական ճարտարապետական լուծումներով միջավայր ձեւավորելու համար»,—ներկայացնելով նոր կատալոգը՝ երեկ ասուլիսում ասաց ՀՀ քաղաքաշինության նախարար Վարդան Վարդանյանը:

Օրինակելի նախագծերի ներդրման եւ կիրառման միջոցով կտնտեսվի 400—800 հազար դրամ: Բացի այդ, կրճատվել են նաեւ ժամկետները. սահմանված կարգով ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու, բնակելի տան նախագիծ պատվիրելու եւ շինարարության թույլտվություն ստանալու համար պահանջվում է առնվազն 2—3 ամիս, մինչդեռ մշակված նախագծի համաձայն՝ այդ գործընթացը կիրականացվի 5—10 օրում: Կատալոգում ներառված նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթը բնակչին կտրվի անվճար, բացի այդ, այն կտեղադրվի նախարարության էլեկտրոնային կայքում:

Կատալոգը ներկայումս թողարկվել է 200 օրինակով, սակայն առաջիկայում նախատեսվում է դրա թիվը հասցնել 1000—ի: Այն կտրամադրվի քաղաքային եւ գյուղական համայնքներին: Կառուցվելիք շինությունների համար օրինակելի նախագծեր մշակելուց բացի, նախարարությունը աշխատանքներ է տանում նաեւ հին շենքերի վերականգնման ուղղությամբ: Այստեղ խնդիրը բավականին բարդ է. շուրջ 5 մլրդ դրամ կպահանջվի չորրորդ աստիճանի վնասվածության 22 բազմաբնակարան շենքերի ամրացման համար: Հնարավոր է նույնիսկ, որ 4—րդ աստիճանի վնասվածության մի քանի շենքեր ընդհանրապես չամրացվեն, քանի որ նրանց վերականգնումը անիմաստ է եւ կպահանջի մեծ միջոցներ. «Հայաստանում ներկայումս երրորդ աստիճանի վնասվածության 522 բազմաբնակարան շենք կա, որոնք, եթե մոտակա ժամանակաշրջանում չամրացվեն, ապա 4—5 տարուց կվերածվեն 4—րդ աստիճանի»:

Նախարարն անդրադարձավ նաեւ աղետի գոտում իրականացվող լայնածավալ շինարարական աշխատանքներին. այս տարվա մայիսին ծրագրվում էր Գյումրիում շահագործման հանձնել 1056

Բնակարան: Բայց վերջերս ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝ Գյումրի կատարած այցից հետո տրվեցին լրացուցիչ հանձնարարություններ կապված գազաֆիկացման, անհատական ջեռուցման համակարգերի տեղադրման հետ: Այժմ այդ ուղղությամբ տարվում են աշխատանքներ եւ նախատեսվում է տները շահագործման հանձնել այս տարվա հունիսին: Իսկ երկրորդ եռամսյակից կսկսվեն աղետի գոտու դպրոցաշինության աշխատանքները: